Doi: 10.56737/2953-7843-2025.05-68

ՌԱՖԻԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

ԶԵՅԹՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԱՐԱՎԱՆԴԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զեյթունը Կիլիկյան Հայաստանի տարածքում գտնվող բնակավայրերից թերեւս ամենից անառիկն էր, որը երկար ժամանակ պահպանել է իր որոշակի ինքնիշխան կարգավիճակը[2]։ Դրան նպաստել էր շրջանի ընդհանուր աշխարհագրական դիրքը։ Մինչեւ ԺԹ. դարի վերջերը Զեյթունը որոշակի առումով փակ է եղել արտաքին աշխարհի համար, եւ նույնիսկ ամեն օտարականի չէ, որ Զեյթունի իշխանները թույլատրել են քաղաք այցելել։ Օրինակ՝ ֆրանսիացի նշանավոր հայագետ Վ. Լանգլուան 1852 թ. իր Կիլիկիա այցելության ժամանակ չի կարողանում գնալ Զեյթուն[3]։ Շրջանը ընկերային-տնտեսական առումով կղզիացած է եղել եւ կարողանում էր ապահովել ինքնաբավությունն, ու հնարավորինս քիչ կախվածություն ունենալ հարեւան շրջաններից[4]։

Ներկա հոդվածով Զեյթունին վերաբերող աշխատությունների (տեղագրական, պատմական, ազգագրական) եւ աշխարհագրական տեղեկատվական համակարգի (ԱՏՀ) միջոցով ստացված տվյալների համադրությամբ փորձ է արվում վերակազմել քաղաքի պատմական ու մշակութային միջավայրի ընդհանուր բնութագիրը՝ շեշտադրելով զառիվայր տարածքները դարավանդման միջոցով արդյունավետ օգտագործելու առանձնահատկությունները եւ զեյթունահայության հմտությունները այս ասպարեզում։ Ընդ որում, կարեւորվում է Ե՛ւ բնակելի, Ե՛ւ տնտեսական տարածքի յուրացման եւ օգտագործման լուսաբանումը։

---

[1]* *Ստացվել է՝ 4.04.2025, գրախոսվել է՝ 4.05.2025։ Էլ. հասցե՝* rafik.gabrielyan.iae@gmail.com:

[2] *Հոդվածը շարադրվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում իրականացվող՝ «Հայոց դարավանդային երկրագործությունը» գիտական թեմայի շրջանակում՝ բազային ֆինանսավորմամբ։ Օգտակար խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ Սուրեն Հոբոսյանին եւ հնագետ Անի Սարատիկյանին։*

[3] *Տե՛ս* Վ. Լանկլուա, *Ուղեւորություն ի Կիլիկիա, Մասիս, 1887, № 3887, էջ 263։*

[4] *Տե՛ս* H. Grothe, Türkisch Asien und seine Wirtschaftswerte, Frankfurt, 1916, *էջ 77։*

ԱՏՀ-ն ժամանակակից գիտության մեջ լայնորեն կիրառվող ծրագիր է, որն օգտագործվում է այլեւայլ բնույթի տվյալներ ստանալու համար: Այն անփոխարինելի գործիք է մշակութային միաջավայրի վերականգնման ու կառուցարկման առումով: Ի տարբերություն գծագրական սկզբունքներ ունեցող քարտեզագրական ծրագրերի, ԱՏՀ-ն, երկրակեղեւի տիեզերական քննախուզման միջոցով ստացված թվային ձեւակառույցների հետ աշխատելու հնարավորություն է տալիս: Դրա շնորհիվ կարող ենք տարածքի երկրաաշխարհագրական հիմքերը պատկերել մանրամասն ճշգրտությամբ՝ կիրառելով ստվերարկման եւ հորիզոնականների կառուցման եղանակները, որ օգտագործվում են նաեւ ռազմատեղագրական քարտեզագրության ոլորտում: ԱՏՀ-ով հնարավոր է նաեւ դիտարկվող տարածքի փաստացի զննման անհնարինության պարագայում, հեռահար հետաքննման եղանակով, արձանագրել մշակութային տարաբնույթ գոյացություններ (ջրանցք, այգի, վարելահող, կամուրջ եւ այլն):

ԶԵՅԹՈՒՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Զեյթունը գտնվում է Կիլիկյան Տավրոս լեռնաշղթայի մաս կազմող Պերիտ լեռնաշղթայի հարավային փեշերին. տեղադրական ցուցիչ՝ X 36.828495 Y 37.873566 *(*WGS 84 EPSG:4326 *համակարգով): Այն տարածվում է ծովի մակարդակից մոտ 900–1100 մ նիշերի միջեւ: Լանջերի միջին թեքությունը 10–35 աստիճան է: Քաղաքը կառուցվել է հյուսիս-արեւմուտքից ու հյուսիս-արեւելքից հոսող երկու գետերի՝ Զորի եւ Շուղուրի միախառնման հատվածում՝ ձգվելով լանջն ի վեր:*

Ընդհանուր առմամբ շրջանի տարածքը կտրված է բազմաթիվ ձորերով (նկ. 1)[5]: Առհասարակ Զեյթունի ողջ շրջակայքում որեւէ հարթ տեղ չկա, ամբողջ շրջակայքը ձորեր ու ժայռեր են[6]: Այս առնչությամբ Հ. Էփրիկյանը գրում է. «Զէյթուն մեր բաջակորով դիւցազանց բնակավայրը՝ լեռներու մէջ հաստատուած աւան մ'է ուր մտնելու համար, պէտք է անցնիլ ան-

[5] *Հոդվածում տեղադրված քարտեզները կազմվել են՝* Quantum Geographic Information System *ծրագրով: Ռելիեֆային հիմքերի համար օգտագործվել են՝* https://opentopography.org/ *կայքից վերցված տեղանքի թվային մոդելները:*

[6] *Տես* Էմիր, *Զէյթունի անցեալից եւ ներկայից, «Արաքս» պատկերազարդ հանդէս, Ս. Պետերբուրգ, 1887, № 1, էջ 105:*

ձուկ ձորակներէ եւ դժուարակոխ շաւիղներէ»[7]: *Ավելի մանրամասն ու պատկերավոր է բնիկ զեյթունցի Ս. Բյուրատի նկարագրությունը.* «Արեւելէն՝ եռանկիւնի սրակատար լեռ մը. արեւմուտէն՝ թաւուտներու եւ բլուրներու երկարաձգուած շարք մը, հիւսիսէն՝ ապառաժուտ, ցից ու ամպերէ ծրարուած սարահարթ մը. հարաւէն՝ ձորերէ կտրուած, լեռնակներէ կարկտուած, անդին շեղ դարեւանդներ. այս ամբողջը կը շրջապատէ աւան մը, հիւսիսային սարին ոտքը, դէպ է հարաւ նայող ապառաժներու կարծր կողերուն վրայ նստած, որուն վրայ կարծես թէ յատիտենական հսկողութեան պաշտօն ստանձնած են շրջակայ բարձունքները»[8]: *Տարածության երկրաաշխարհագրական յուրահատկությունների մասին վերոբերյալ նկարագրությունները հստակորեն տեսանելի են նաեւ ԱՏՀ-ով ստացված արբանյակային լուսանկարներում եւ երկրակեղեւի թվային կառուցապատկերներում:*

Զեյթունը շրջակա բնակավայրերի հետ կապող բոլոր ճանապարհներն ու արահետներն անցել են նեղ ձորերով, գետափնյա հատվածներով, զառիվայրերով ու բարձունքներով: Գետանցումներն ապահովելու համար կառուցվել են կամուրջներ: ԱՏՀ-ով արձանագրվեց քաղաքի մուտքն ապահովող հինգ կամուրջ: Դրանցից մեկը անմիջապես կապում էր երկու զառիթափ, ուղղահայաց քարափներ, որոնց ներքեւում գտնվում էր խորը անդունդ[9]: Այդ ամենը հնարավորություն է տվել Զեյթունի հայերին անհրաժեշտության դեպքում ընտրել հարմար կետեր դիրքավորվելու համար, եւ այդ տեղերից պաշտպանել ռազմավարական կարեւորություն ունեցող ուղիները[10]: Այդ մասին բրիտանացի զինվորական Վ. Չայլդսը գրում է. «Ուղիները երբեմն անցնում են շատ նեղ հատվածներով, որոնց վերեւներում հսկա ժայռեր կան, որտեղ տասը հրաձիգը կարող էր հազար հոգանոց զորին կանգնեցնել»[11]: *Միեւնույն ժամանակ, ճանապարհային ենթակառուցվածքների ստեղծումը թույլ է տվել զարգացնել տնտեսական գործունեությունը, որը անչափ կարեւոր էր նման աշխարհագրական*

---

[7] Հ. ԷՓՐԻԿԵԱՆ, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հտ. Ա., Վենետիկ, 1902, էջ 735:*

[8] Ս. ԲԻՒՐԱՏ, *Լեռնականի մը յուշատետրը, Բազմավէպ, 1935, № 1, էջ 38:*

[9] *Տես* M. SYKES, Dar-Ul-Islam: A Record of a Journey Through Ten of the Asiatic Provinces of Turkey, London, *1904, էջ 74:*

[10] *Տես* Ղ. ԱԼԻՇԱՆ, *Սիսուան: Համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 190, Ճեւահիրճյան Մ., Զեյթուն եւ իր շրջակայքը, Էջմիածին, 1963, № 5, էջ 35:*

[11] *Տես* W. CHILDS, Across Asia Minor on Foot, Edinburgh/London, 1917, *էջ 396:*

միջավայրի պայմաններում։ Բեռնափոխադրումը հիմնականում ապահովվում էր ջորիների ու ավանակների միջոցով։ Հարեւան շրջաններում զեյթունցին հայտնի էր որպես հմուտ ջորեպան[12]։ Նշենք, որ ձմռան ամիսներին, երբեմն, որոշ ճանապարհներ ձյան պատճառով առհասարակ փակվել են, ու տեղաշարժը դրանցով դադարել է[13]։

ԶԵՅԹՈՒՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՒ ՏԱՐԱԾՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զեյթունի հիմնադրման հետ կապված կան տարբեր վարկածներ, որոնց մեծ մասը հիմնված է բանավոր ավանդությունների ու տարբեր ժամանակաշրջաններում գրված ձեռագրերի մեջ առկա տեղեկությունների վրա[14]։

Ըստ ավանդության՝ Զեյթունի առաջին հայ բնակիչները եղել են Անիից գաղթած 7 ընտանիքներ։ Նրանք հաստատվել են այժմյան քաղաքի մոտակա ձորերից մեկում, որին տրվել է «Անի ձոր»[15] անվանումը։ Անիից դեպի Զեյթունի մոտակա տարածքներ՝ մասնավորապես դեպի Ջերմուկի դաշտ գաղթականների տեղաշարժի մասին պահպանվել են նաեւ գրավոր տեղեկություններ «Գանձ» անվանումով մի ձեռագիր հիշատակարանում[16]։

Զեյթունը հիմնադրվել է 1375–1409 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածում։ Քաղաքի տեղում բյուզանդական շրջանում եղել է հունաբնակ փոքր բնակավայր։ Նշենք, որ Զեյթունի Սբ. Աստվածածին եկեղեցին նույնպես ժամանակին եղել է հունադավան. այդ է վկայում եկեղեցու պատին ագուցված հունարեն արձանագրությունը։ Պահպանվել են նաեւ Զեյթունում գրված հունարեն ձեռագրեր, որոնց հիշատակարաններում որոշակի տեղեկություններ կան բնակավայրի մասին[17]։

---

[12] *Տե՛ս* Ա. Աճառոնեան, Ն. Պատկանեան, *Զէյթունի պատմագիրք, Պուէնոս Այրէս, 1960, էջ 334։*

[13] *Տե՛ս* W. Childs, Across Asia Minor on Foot, Edinburgh/London, 1917, *էջ 394։*

[14] *Տե՛ս* Հ. Էփրիկեան, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հտ. Ա., Վենետիկ, 1902, էջ 735–737,* Զէյթունցի, *Զէյթունի անցեալէն եւ ներկայէն, Կ. Պոլիս, 1911, էջ 8,* Մ. Սիսեռեան, *Պատմութիւն Զէյթունի, Լիբանան, 1996, էջ 27, 39–42։*

[15] *Տե՛ս* Գ. Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 93։*

[16] *Տե՛ս* Մ. Սիսեռեան, *Պատմութիւն Զէյթունի, Լիբանան, 1996, էջ 27։*

[17] *Տե՛ս* Գ. Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 93,* Մ. Ճեհաճիրճեան, *Զէյթուն եւ իր շրջակայքը, Էջմիածին, 1963, № 5, էջ 32։*

Զեյթունի հայերով բնակեցումը կապվում է Հեթում սպարապետի կնոջ՝ Զարմանուհու անվան հետ: Կիլիկիայում հայկական արքայատոհմի կործանումից հետո սպարապետը դավադրաբար սպանվում է: Զարմանուհին իրեն հավատարիմ մարդկանց հետ հեռանում է Կիլիկիայի լեռնային հատվածները՝ այս ընթացքում գրավելով մի քանի բերդեր, որոնց թվում էր նշանավոր Կապանը[18]: Որոշ ժամանակ բնակության համար հիմնական տարածք փնտրելուց հետո, նա գալիս է Զեյթուն ու հաստատվում այդտեղ[19]:

Այդ մասին վկայում է ոմն Կիրակոս Վարդապետի գրած հիշատակարանը[20]: Այն ըստ որոշ հայագետների, որպես պատմական սկզբնաղբյուր արժանահավատ չէ ու կարող էր կեղծված լինել: Այս տեսակետը չի կիսում պատմաբան Հ. Պողոսյանը, ըստ նրա հիշատակարանում ճշմարտացի է ներկայացված պատմական դեպքերի շարժընթացը, քանի որ Կիլիկիայում հայկական թագավորության անկումից հետո, շատ իշխաններ ժողովրդի մի ստվար մասի հետ հեռացել են լեռնային դժվարամատչելի վայրերը, ու պատմական գործընթացների առումով հիշատակարանը չի կարող արժանահավատ չլինել[21]:

Ըստ որոշ հետազոտողների՝ Զեյթունն սկզբնապես գյուղ է եղել, ու այն որպես ավանատիպ բնակավայր սկսել է ձեւավորվել 1545 թ. հետո, երբ սուլթան Մարադ Դ. հրովարտակով շրջանին որոշակի հարկային արտոնություններ են տրվել: Այս ընթացքում բնակավայրը զարգացել է, իսկ բնակչության թվաքանակը ավելացել[22]:

---

[18] Տե՛ս Գ. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 95:

[19] Տե՛ս Էմիր, Զէյթունի անցեալից եւ ներկայից, Արաքս պատկերազարդ հանդէս, 1887, № 1, էջ 105, Հ. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հտ. Ա., Վենետիկ, 1902, էջ 735–744, Զէյթունցի, Զէյթունի անցեալէն եւ ներկայէն, Կ. Պոլիս, 1911, էջ 1, Գ. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 95:

[20] Տե՛ս Գ. Ղարիպեան, Զէյթունի անցեալից, Մուրճ, 1901, № 7, էջ 65:

[21] Տե՛ս Հ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը, Երեւան, 1969, էջ 94–95:

[22] Տե՛ս Մ. Սիսեռեան, Պատմութիւն Զէյթունի, Լիբանան, 1996, էջ 24, 68–69: Քննության է ենթարկվել նաեւ Զեյթունի անվանումների խնդիրը: Մասնագետների շրջանում որոշակի տարակարծություններ կան Զեյթունի հին անվան՝ Ուլնիայի վերաբերյալ: Հ. Ճեւահիրճյանը կարծում է, որ դա հունարեն Հուլիոպոլիս տեղանվան աղճատված ձեւն է, որը գտնվել է բուն Զեյթունի տեղում, մինչեւ հայերով վերաբնակեցվելը (տե՛ս Մ. Ճեհաճիրճյան, Զեյթուն եւ իր շրջակայքը, Էջմիածին, 1963, № 5, էջ 32): Մեկ այլ տեսակետի համաձայն Ուլնիան Ֆոնուզ գյուղի մոտ գտնվող հին բնակավայր է եղել, որի բնակիչները ժամանակի ընթացքում տեղափոխվել են Զեյթուն: Այս կարծիքը հիմնվում է այն փաստի վրա, որ Զեյթունի հայերի շրջանում Ուլնիան կոչվել է նաեւ հին գյուղ (տե՛ս Գ. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ

Տնտեսական առումով տարածքի ընտրությունն ունի որոշակի տրամաբանություն։ Չնայած նրան, որ երկրային մակերեւույթի իշխող տարրերը ձորերն էին, եւ հիմնական օգտագործվող հողամասերը գտնվում էին լանջերին, այնուամենայնիվ այստեղ դարավանդման միջոցով զարգանում էր երկրագործությունը։ Դարավանդներ են սեղծվել ե՛ւ ցանքատարածքների, ե՛ւ այգիների համար։ Հենապատերի կառուցման նպատակով օգտագործվել է տեղի քարը։ Այս համապատկերում առանցքային էր նաեւ ջրային պաշարներով ապահովված լինելու հանգամանքը։ Տարածքում բացի մանր ու մեծ գետերից կային նաեւ աղբյուրներ։ Գոտիականության առումով շրջանը գտնվում էր միջին մակարդակում, որտեղ օդերեւութաբանական պայմանները բարենպաստ էին։

Ռազմավարական տեսակետով Զեյթունի աշխարհագրական միջավայրը նախապատվելի էր չորս հիմնական հանգամանքներից ելնելով։ Առաջին՝ քաղաք հասնելու համար հարկավոր էր անցնել կտրտված ձորերով, որտեղ հեշտ էր փուլ առ փուլ կազմակերպել պաշտպանությունը, ու մի անհաջողության պարագայում, հնարավոր էր նահանջել՝ դիրքավորվելով հաջորդ ձորաբերանում։ Երկրորդ՝ երկու կողմից գետերով շրջապատված, Զեյթունի հայերը հնարավորություն ունեին միայն կամուրջները պաշտպանելով վերահսկել քաղաք մտնող բոլոր ուղիները։ Երրորդ՝ շրջակա տարածության հետ համեմատած, քաղաքը գտնվում էր փոքր թեքություն ունեցող լանջին, որը որոշակի հեշտացրել է կենսագործունեության կազմակերպումը։ Չորրորդ՝ թիկունքում ունենալով լեռնային ազատ տարածքներ զեյթունցին կարող էր ծայրահեղ դեպքում թողնել քաղաքն ու նահանջել։

Թերեւս տարածքի ընտրության կարեւոր պայմաններից մեկն էլ օգտակար հանածոների առկայությունն էր։ Զեյթունի շրջակայքում կային երկաթի հանքեր, որոնցից ամենամեծը գտնվում էր Պերիտ լեռան գագաթին։ Դրա շնորհիվ զարգացել էին դարբնությունն ու զինագործությունը։

եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 93, Մ. Սիսեռեան, *Պատմութիւն Զէյթունի, Լիբանան, 1996, էջ 27, 38)։ Այս տեսակետը ներկայումս ավելի փաստարկված է, եւ ընդունվում է մասնագետների մեծ մասի կողմից։ Ուլնիան լքված գյուղ է, որը գտնվում է Զեյթունից 30 կմ հեռավորության վրա։ Հայտնի է, որ գյուղը մինչեւ ԺԸ. դարը բնակեցված է եղել հայերով (տե՛ս* Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. Ե., Երեւան, 2001, էջ 181)։ Հետեւաբար երկու Ուլնիա անունով բնակավայրեր դժվար թե միաժամանակ գոյություն ունեցած լինեին այս տարածքում։*

Արհեստի այս տեսակներն այնքան էին տարածված, որ ոչ միայն ապահովում էին ներքին պահանջարկը, այլեւ արտահանումը։ Զեյթունցի վարպետները իրենց քաղաքին բնորոշ հրացանի տեսակն են սարքել, որը հենց կոչվում էր «Զեյթունի հրացան»[23]։

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԴԱՐԱՎԱՆԴԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ

Զեյթունը Հայկական մշակույթին բնորոշ դարավանդային բնակավայրի դասական օրինակ է։ Այն հիմնվել է առանց նախագծման, սանդղաձեւ կառուցապատումով՝ հարմարեցվելով երկրակեղեւին։ Ղ. Ալիշանը ցանկանալով շեշտել այս հանգամանքը, հղում անելով ոմն ֆրանսիացի ուղեգրի, այն նկարագրում է հետեւյալ կերպ. «ի զառիվայր լերին դար ի դար, որպէս թէ մէն տուն այլոյ տան սանդուղ իցէ վերելից. փողոցք առապարք եւ ծամածուռք ստիպեն զուղեւորս մեծաւ զգուշութեամբ գնալ՝ եթէ կամիցին մնալ ողջանդամ»[24]։ *Ակնհայտ է, որ* «դար ի դար» *արտահայտությունն է, որով նա ընդգծել է քաղաքի դարավանդային լինելը։ Նա նույն բնորոշումն օգտագործում է նաեւ Կիլիկիայի Պեյլան քաղաքի նկարագրության համար, որը նույնպես դարավանդային կառուցապատում ուներ*[25]։ *Մեկ այլ հեղինակ Զեյթունի մասին գրել է.* «Զէյթուն ենք. անառիկ լեռան մը կողին վրայ շինուած մի քաղաք, տուներ տուներու վրայ, մէկուն տանիքը միշտ միւսին բակն է աստիճանաբար շինուած»[26]։

Հետաքրքրական է Վ. Զայլդսի նկարագրությունը, համաձայն որի՝ Զեյթունի տները այնպես էին «ձուլված» տեղանքին, որ կարծես դրանք «կտրված թերթաքարեր» լինեին, որոնք հսկա կտորներով տարածվում էին լանջով մեկ։ Նա նշում է, որ քաղաքում կային նաեւ երկթեք տա-

---

[23] *Տես* Ղ. Ալիշան, *Սիսուան։ Համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 189,* Զէյթունցի, *Զեյթունի անցեալէն եւ ներկայէն, Կ. Պոլիս, 1911, էջ 223,* Մ. Ճեհաձիրճեան, *Զեյթուն եւ իր շրջակայքը, «Էջմիածին», 1963, № 5, էջ 33–34։*

[24] Ղ. Ալիշան, *Սիսուան։ Համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 189։*

[25] *Տես* Ղ. Ալիշան, *Սիսուան։ Համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 420։*

[26] Անուշաեան, *Զէյթուն, Արաքս պատկերազարդ հանդէս, Ս. Պետերբուրգ, 1887, № 1, էջ 126։*

նիքներով տներ, ու միայն դրանց կտուրներին նայելով է, որ հասկանում ես, թե դրանք իսկական տներ էին[27]։ Շատ հեղինակներ Զեյթունի համայնապատկերը բնորոշում են «ամֆիթատրոնաձեւ» բառով, որն առհասարակ շատ բնորոշ ու տարածված արտահայտություն է դարավանդային բնակավայրերի նկարագրության համար[28]։

Շատ աշխատություններում նշվում է Զեյթունի տների թիվը, սակայն տարբերությունները հայտնած տվյալների մեջ բավական մեծ են։ Այսպես, բերվում են 1100[29], 1130[30], 1500[31], 1600[32], մինչեւ անգամ 2000[33] տուն ունենալու մասին տեղեկություններ։

*Հետաքրքրական են Վ. Զայլդսի՝ օտարի աչքով արված մեկնաբանությունները։ Օրինակ՝ նա նշում է, որ հեռվից Զեյթունի համայնապատկերը դիտելիս, տները նմանվում են աստիճանների, որոնք բարձրանում են ժայռն ի վեր՝ դեպի երկինք։ Մոտենալով քաղաքին՝ պատկերը որոշակի փոխվում է։ Նրա այցելության օրը քաղաքում հորդ անձրեւ է տեղացել։ Անձրեւաջրերը հարթ կտուրներից հաջորդաբար թափվել են ներքեւ, ինչը քաղաքի վերաբերյալ նրա մտքում թողել է սանդղաջրվեժի (*cascade*) տպավորություն[34]։*

Ուշագրավ տվյալներ են պահպանվել այդպիսի դարավանդային բնակավայրերում, կենցաղավարության կազմակերպման մասին։ Օրինակ՝ Զեյթունում ամռան ամիսներին անմիջապես կտուրների վրա են գիշերել[35]։ Մի տան կտուրը թեեւ կառուցվում էր տվյալ տան տիրոջ ջանքերով, սակայն օգտագործում էր վերեւի հարեւանը։ Միեւնույն ժամանակ, որպես ճանապարհ կիրառվելու դեպքում այն նաեւ համայնքին է պատկանել։

---

[27] *Տե՛ս* W. Childs, Across Asia Minor on Foot, Edinburgh/London, 1917, *էջ 399։*

[28] *Տե՛ս* Գ. Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 95,* Ս. Բիւրատ, *Լեռնականի մը յուշատետրը, Բազմավէպ, 1935, № 1, էջ 40։*

[29] *Տե՛ս* Մ. ՃեհաՀիրճեան, *Զեյթուն եւ իր շրջակայքը, Էջմիածին, 1963, № 5, էջ 33։*

[30] *Տե՛ս* Մ. Սիսեռեան, *Պատմութիւն Զէյթունի, Լիբանան, 1996, էջ 655։*

[31] *Տե՛ս* Հ. Էփրիկեան, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հտ. Ա., Վենետիկ, 1902, էջ 737։*

[32] *Տե՛ս* Գ. Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 95։*

[33] *Տե՛ս* Էմիր, *Զէյթունի անցեալից եւ ներկայից, Արաքս պատկերազարդ հանդէս, Ս. Պետերբուրգ, 1887, № 1, էջ 108։*

[34] *Տե՛ս* W. Childs, Across Asia Minor on Foot, Edinburgh/London, 1917, *էջ 397։*

[35] *Տե՛ս* Յ. Ալլահվէրտեան, *Ուլնիա կամ Զէյթուն, Կ. Պոլիս, 1884, էջ 33,* Մ. Վարժապետեան, *Յուշիկք Զէյթունի, Մարզուան, 1912, էջ 5,* Ա. Ահարոնեան, Ն. Պատկանեան, *Զէյթունի պատմագիրք, Պուէնոս Այրէս, 1960, էջ 301։*

ԶԵՅԹՈՒՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՐԱՎԱՆԴՄԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄ

Զեյթունի բնակարանային համալիրն ավանդաբար երկու հարկանի է եղել։ Սովորաբար առաջին հարկը ծառայել է որպես գոմ, իսկ երկրորդը՝ տուն։ Բնակարանները քարաշեն էին, իսկ որպես շաղախ օգտագործվել է կավահողը, որը ավելի կպչուն էր քան սովորական հողով պատրաստված շաղախը։ Ինչպես Հայաստանի բազմաթիվ պատմաազգագրական շրջաններում, այնպես եւ Զեյթունում տունը չուներ ներքին բաժանում, այլ կազմված էր մեկ մեծ սենյակից, որտեղ փոքր-ինչ բարձր դիրքով տարածք են հատկացրել խոհանոցի համար։ Տան մի անկյունում նաեւ հոր կար՝ հացահատիկ պահելու նպատակով[36]։

Տների կտուրները սարքել են ամուր գերաններով, որոնք շարում էին իրար մոտ։ Դրանց արանքները դնում էին ավելի բարակ փայտից ձողեր, ապա խիտ ճյուղեր էին փռում։ Դրանց վրա հող լցնում, որը մի քանի անգամ տոփանում էին «լողքարով»[37], որպեսզի անջրաթափանց դառնար։ Այս գործողությունը պարբերաբար կրկնում էին ջրամեկուսացումն պահպանելու համար, հատկապես անձրեւներից հետո։ Կտուրները սարքում էին պատերից փոքր-ինչ դուրս եկած եզրերով, այդ հատվածը կոչում էին «ցիւիծէարք» («ցիւին ծայրը»[38])։ Հենց այդ մասում ամրացնում էին ջրհորդաններ, անձրեւաջրերի հեռացման համար, որոնք կոչվում էին «ճէօրթիւն»[39]։

Երկհարկանի տները սանդղաձեւ կառուցապատման պարագայում բազմահարկ շենքի տեսք էին ձեռք բերում, կարծես փռված լանջի վրա։ Քաղաքն ուներ առանձին կցաթաղեր, որոնց միջեւ կային նեղ ճանապարհներ։ Դրանք ոլորաններով ընթանում էին տների պատվարների եզրերով։ Դրանցից աստիճաններով հնարավոր էր վեր բարձրանալ մի

---

[36] *Տե՛ս* Յ. Ալլահվերտեան, *Ուլնիա կամ Զէյթուն, Կ. Պոլիս, 1884, էջ 11, 33,* Ս. Բիւրատ, *Լեռնականի մը յուշատետրը, Բազմավէպ, 1935, № 1, էջ 40։*

[37] *Լողքարը գլանաձեւ քարով գործիք է։ Քարի առանցքով անցնում է երկաթյա ձող, որի եզրերը եռանկյունաձեւ տարածվելով միանում էին իրար՝ կազմելով բռնակ։*

[38] *«Ցիւ» նշանակում է տան ծածկ՝ կտուր, բառացի կստացվի կտուրի եզր։ Տե՛ս* Ս. Գաբամաճեան, *Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910, էջ 1318։*

[39] *Տե՛ս* Յ. Ալլահվերտեան, *Ուլնիա կամ Զէյթուն, Կ. Պոլիս, 1884, էջ 12,* Ա. Ահարոնեան, Ն. Պատկանեան, *Զէյթունի պատմագիրք, Պուէնոս Այրէս, 1960, էջ 301։ Նույնական է «ճոռթան» բառին։ Տե՛ս* Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան, հտ. Գ., Երեւան, 1944, էջ 223։*

շարքով իրար կից տների կտուրներին[40]։ Տափակ տանիքները, որոնք որպես փողոց էին ծառայում, տարբեր մակարդակներ ունեին, եւ մի մակարդակից հաջորդին անցնելիս կառուցված էին աստիճաններ, երբեմն օգտագործվում էին փայտե շարժական աստիճաններ[41]։ Այդպիսի կառուցապատման պարագայում քաղաքի մեջ այգիների ու բանջարանոցների մշակումը բացառվում էր, քանի որ տարածությունն անբավարար էր։

Քաղաքում ժողովրդական բնակարաններից իրենց ճարտարապետությամբ եւ տեղի ընտրությամբ տարբերվում էին իշխանական ապարանքները, որոնք կառուցված էին մեկուսի ժայռերի վրա։ Օրինակ՝ Սուրենյանների ապարանքը հիմնված էր մի այնպիսի տեղում, որը երեք կողմից բաժանված էր շրջակա տարածքներից ուղղահայաց ժայռերով, որոնց ձեւավորած գահավանդի վրա էլ բարձրանում էր ապարանքը[42]։

Վ. Զայլդսը նշում է, որ Զեյթունում ինքն այցելել է այնպիսի տներ, որ ունեին առանձին սենյակներ, որոնք ասես կախված էին անդունդների վրա։ Այդպիսի տների տերերը իրենց բնակելի տարածքը մեծացնելու նպատակով պատշգամբներ են սարքել ու դրանք ծածկել են փայտից տախտակներով, այնպես որ ամբողջովին սենյակի վերածվի։ Դուրս ցցված հատվածը ներքեւից ամրացրել են փայտե թեք հենասյուներով, որոնք միանում էին տան հիմքին կամ էլ առաջին հարկի պատերին[43]։

Զեյթունում բնակելի տարածքի օգտագործման եղանակների կիրառումը, կարող է օգտակար լինել ՀՀ-ում նմանատիպ բնակավայրերի զարգացման առումով։ Օրինակ՝ Գորիսի, Դիլիջանի, Ալավերդու եւ այլն։ ՀՀ-ում որոշ բնակավայրեր շրջապատված են զառիվայր տարածքներով, որոնք ոչ այդքան արդյունավետ են օգտագործվում եւ բնակավայրերն ընդլայնվում են միայն հարթավայրերի հաշվին։ Դարավանդային կառուցապատման կիրառման միջոցով, հնարավոր է իրացնել նաեւ լանջային տարածքները։ Նման նախագծեր ԽՍՀՄ շրջանում իրականացվել են Կապանում։ Մասնավորապես Դավիթ Բեկ (նախկինում՝ Սպանդարյան) թաղամասում հիմնվել են սանդղաձեւ կառուցապատում ունեցող բազմահարկ շենքեր։

---

[40] *Տե՛ս* H. Grothe, Geographische Charakterbilder aus der asiatischen Türkei, Leipzig, 1909, t. XXVI:

[41] *Տե՛ս* W. Childs, Across Asia Minor on Foot, Edinburgh/London, 1917, *էջ 400։*

[42] *Տե՛ս* H. Grothe, Geographische Charakterbilder aus der asiatischen Türkei, Leipzig, 1909, t. XXIV:

[43] *Տե՛ս* W. Childs, Across Asia Minor on Foot, Edinburgh/London, 1917, *էջ 400։*

ԴԱՐԱՎԱՆԴԱՅԻՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես հայոց ավանդական տնտեսության մեջ, Զեյթունում եւս երկրագործության հիմնական ճյուղերն էին դաշտավարությունը եւ այգեգործությունը: Մասամբ զբաղվել են նաեւ բանջարաբուծությամբ: Ավանդաբար փորձ է արվել մշակելի դարձնել բնակավայրի շրջակայքում գտնվող բոլոր հնարավոր հողակտորները, քանի որ Զեյթունը լեռնային բնակավայր էր, եւ հողատարածքի պակաս էր զգացվում:

Թեեւ երկրաաշխարհագրական պայմանները հնարավորություն չէին ընձեռում հացահատիկի մշակության նպատակով ընդարձակ վարելահողեր ունենալ համար, սակայն զեյթունցին հմուտ ձեւով կարողացել է օգտագործել իր փոքր արտերը[44]: Հացաբույսերից մշակում էին ցորեն, գարի, կորեկ եւ այլն, որը, սակայն չէր բավարարում ներքին պահանջները[45]: Հացի անհրաժեշտ քանակությունը լրացվում էր հացահատիկի ներկրմամբ[46]: Ցորենի սակավ լինելու հետ կապված եղել է այն հավատալիքը, համաձայն որի կալի մեջ քար են դրել, որպեսզի առատություն լինի[47]:

Զեյթունի վարելահողերը գերազանցապես գտնվում են լանջերին եւ դարավանդների ձեւով տարածվում են քաղաքից հարավ-արեւմուտք՝ Շուղուր գետի աջ ափին, հյուսիս-արեւելք՝ Ջոր գետի ձախ ափին, փոքր հողակտորներով նաեւ աջ ափին, եւ հարավում՝ Զեյթուն գետի աջ ու ձախ ափերին (նկ. 2):

Զեյթունի դարավանդային վարելահողերի առանձնահատկությունն այն է, որ դրանք իրենց միջնակներում չունեն աչքի ընկնող բարձր հենաթմբեր (առավելագույն նիշը արձանագրվել է Ջոր գետի ձախ ափին գտնվող հողամասերի դեպքում, որոնց հենաթմբերն ունեն մինչեւ 4 մ բարձրություն), այլ սահմանազատված են ծառաշարքերով ու քարակույ-

---

[44] *Տե՛ս* Էմիր, *Զէյթունի անցեալից եւ ներկայից, «Արաքս պատկերազարդ հանդէս», Ս. Պետերբուրգ, 1887, № 1, էջ 108,* Մ. Սիսեռեան, *Պատմութիւն Զէյթունի, Լիբանան, 1996, էջ 43:*

[45] *Տե՛ս* Յ. Ալլահվերտեան, *Ուլնիա կամ Զէյթուն, Կ. Պոլիս, 1884, էջ 64,* Գ. Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 90:*

[46] *Տե՛ս* Զէյթունցի, *Զէյթունի անցեալէն եւ ներկայէն, Կ. Պոլիս, 1911, էջ 222,* Մ. ՃեհաՀիրճյան, *Զեյթուն եւ իր շրջակայքը, Էջմիածին, 1963, № 5, էջ 33:*

[47] *Տե՛ս* Յ. Ալլահվերտեան, *Ուլնիա կամ Զէյթուն, Կ. Պոլիս, 1884, էջ 106:*

տերով, իսկ մշակվող հիմնական հատվածները մինչեւ վերջ հարթեցված չեն. դա ակնհայտորեն երեւում է նաեւ 1909 թ. արված լուսանկարում[48]:

գիտենք, որ դարավանդային վարելահողերը դասակարգվում են ըստ երեք հիմնական տիպերի: Առաջին՝ բարձր հենաթմբերով դարավանդներ, որոնց մշակովի հատվածները համաչափ չեն ու տարածվում են անկանոն ձեւով: Դրանք հիմնականում գտնվում են մեծ թեքություն ունեցող լանջերին ու հնարավորին չափով հարմարեցված են տեղանքի անհարթություններին: Երկրորդ՝ ցածր հենաթմբերով համաչափ դարավանդներ, որոնք հիմնականում գտնվում են փոքր թեքություն ունեցող լանջերին: Զեյթունի դարավանդային վարելահողերը պատկանում են երրորդ տիպին, որոնց բնութագրական ֆիզիկական հատկանիշը միջանկյալ քարակույտերն են[49]: Այդպիսի դարավանդները հիմնականում տարածվում են այն վայրերում, որտեղ լանջերը ընդարձակ չեն, իսկ հողը ավելի քարքարոտ է: Այս պարագայում հողամաշումը նվազեցվել է, ոչ թե հենաթմբերի շնորհիվ, այլ ծառաշարքերի արմատային համակարգի:

Դարավանդային այգեգործության բնորոշ հատկանիշները

Դաշտամշակությանը զուգահեռ Զեյթունում լավ զարգացած էր այգեգործությունը: Շրջանի բոլոր գյուղերը դարավանդային այգիներ են ունեցել գետերի մերձակա տարածքներում: Ողջ շրջանն ուներ 7000–8000, իսկ բուն Զեյթունը՝ 2500 կտոր այգի[50]: Մեկ այլ աղբյուրի համաձայն քաղաքում դրանց թիվը հասնում էր 3000-ի[51]: Ըստ էության, կտոր բառի ներքո հեղինակները նկատի են ունեցել մեկ ընտանիքին բաժին հասնող այգու հողատարածքը:

Շրջանում բնակավայրերի հիմնադրման համար այգեգործությունը եղել է կարեւոր ու պայմանավորող գործոն: Իրարից կտրտված, առանձին տարածքներով, փոքր լեռնային հողամասերի առկայությունը, պատճառ է հանդիսացել, որ ձեւավորվեն «ագարակային» տիպի գյուղական բնակավայրեր, որոնց դեպքում գյուղերի տները իրարից անջատ են գտնվում՝ ցրված մանր ագարակների ձեւով: Այս երեւույթն ընդհանուր

---

[48] *Տե՛ս* H. Grothe, Geographische Charakterbilder aus der asiatischen Türkei, Leipzig, 1909, t. XXV:

[49] *Հմմտ.* D. Korobov, A. Borisov, The origins of terraced field agriculture in the Caucasus: new discoveries in the Kislovodsk basin, Antiquity, 2013, Vol. 87, Issue 338, *էջ 1089–1092:*

[50] *Տե՛ս* Գ. Ղարիպեան, *Զէյթունի ներկայից, Մուրճ, 1901, № 2, էջ 46:*

[51] *Տե՛ս* Յ. Ալլահվէրտեան, *Ուլնիա կամ Զէյթուն, Կ. Պոլիս, 1884, էջ 64:*

առմամբ բնորոշ չէ հայոց մեջ ավանդաբար ձեւավորված բնակավայրերի կառուցապատման սկզբունքներին, սակայն լանդշաֆտի հատկություններով պայմանավորված կիրառվել է տարածքի յուրացման նաեւ այս եղանակը, որը տվյալ դեպքում ավելի նպատակահարմար էր, քանի որ տները գտնվել են հողամասերին հնարավորինս մոտ: Զեյթունում ագարակային բնակավայրի բնորոշ օրինակ է Արեգին գյուղը, երբեմն այն կոչվում է նաեւ գյուղախումբ[52]:

Զեյթունում այգիները մեծ մասամբ տարածվում էին վարելահողերից ներքեւ գտնվող լանջերին (նկ. 2): Ավանդաբար ընտրվում էին այնպիսի հողամասեր, որտեղ կարող էին գետից առու անցկացնելով ոռոգման համակարգ ստեղծել, քանի որ առանց դրա հնարավոր չէր արդյունավետորեն զբաղվել այգեգործությամբ: Քաղաքի այգիները այնքան լավ են խնամված եղել, որ արժանացել են այսպիսի գնահատականի. «Զէյթունցիներու մշակած այգիները հեռուէն դիտողին, զինուորական շարքերու կը նմանէին, որոնց կարգերու միջեւ բացը որոշապէս յայտնի կ՚ըլլար»[53]: *Այսինքն ծառերը այնքան հավասար էին տնկված, որ դրանց շարքերի միջեւ ճիշտ նույն հեռավորությունն էր պահպանվում: Ժամանակի ընթացքում Զեյթունի ու շրջակա գյուղերի այգիներն անխնամ են մնացել, եւ ներկայումս ուրվագծվում են միայն դրանց հետքերը՝ լքված դարավանդների ձեւով:*

Այգիներում հիմնականում մշակել են խաղող, թուզ, նուռ, ձիթապտուղ եւ այլն: Հատկապես նշանավոր են եղել Զեյթունի խաղողի տեսակները, որոնցից ստացել են չամիչ, ու վաճառել հարեւան շրջաններում[54]: Զեյթունը հայտնի էր նաեւ իր ընկուզենիներով, որ օգտագործում էին նաեւ որպես փայտանյութ: Վերջինս ինքնաբույս էր, ու հատուկ ձեւով չի մշակվել[55]:

Զեյթունում այգեգործությամբ զբաղվող ընտանիքները մայիսին տեղափոխվում էին իրենց այգիները, որտեղ ունեին կացարաններ, որ կոչվում էին «այգետուն»[56]*: Հողամշակման ողջ տարեշրջանի ընթացքում*

---

[52] *Տե՛ս* Զէյթունցի, *Զէյթունի անցեալէն եւ ներկայէն, Կ. Պոլիս, 1911, էջ 127–128:* Մ. Վարժապետեան, *Յուշիկք Զէյթունի, Մարզուան, 1912, էջ 10:*

[53] Ա. Աշարոնեան, Ն. Պատկանեան, *Զէյթունի պատմագիրք, Պուէնոս Այրէս, 1960, էջ 329:*

[54] *Տե՛ս* Գ. Ղարիպեան, *Զէյթունի ներկայից, Մուրճ, 1901, № 2, էջ 45:*

[55] *Տե՛ս* Ղ. Ալիշան, *Սիսուան: Համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 189:*

[56] *Տե՛ս* Ա. Աշարոնեան, Ն. Պատկանեան, *Զէյթունի պատմագիրք, Պուէնոս Այրէս, 1960, էջ 330:*

նրանք մնում էին այդտեղ եւ տեր կանգնում բերքին։ Նման խնամք էր պահանջում հատկապես խաղողը, որը մշակում էին մեծ քանակությամբ։ Վերադառնում էին հոկտեմբերին՝ բերքահավաքից հետո։ Այս երեւույթը կոչվում էր «օդափոխություն»[57]։ Հայոց մեջ այն տարածված է եղել գրեթե այն բոլոր շրջաններում, որտեղ բնակավայրերից հեռու այգիներ են ունեցել, եւ ամեն օր այգի գնալ, այնտեղ աշխատել ու հետ վերադառնալը նպատակահարմար չի եղել[58]։

ԱՏՀ-ով հնարավոր եղավ արձանագրել երկու առուների հետքեր (նկ. 2)։ Դրանցից մեկը ջրառ է իրականացրել՝ Շուղուր, մյուսը՝ Զոր գետից։ Շուղուրի առուն ունի մոտ 1000, իսկ Զորինը 2025 մ երկարություն։ Առավել զառիվայր տեղանքով է անցկացված Զորի առուն։ Մոտ 300 մ հատվածում այն տարված է 35 աստիճանի թեքություն ունեցող լանջով։ Որոշ մասերում հատվում է լեռնածալքերի հետ։ Այդ պարագայում այն կորանում կամ ոլորանի ձեւ է ստանում՝ հետեւելով երկրակեղեւի «թելադրանքին»։

Զեյթունում տեւական փորձի արդյունքում ձեւավորվել է ջուրն ամբարելու անհրաժեշտություն։ Այդ նպատակով այգու վերեւի մասում կառուցում էին ջրավազաններ, որոնց ջուրը օգտագործվել է ոռոգման համար։ Սովորաբար լցվել են աղբյուրներից ու գետերից հոսող ջրերով։ Դրանք Զեյթունի բարբառով կոչվում էին «կէօփ»[59]։ Այս առումով հետաքրքրական է, որ Քեսաբում «կէօփ» («կուփ») է կոչվում աղբյուրի այն տեսակը, որի ջուրը հավաքվում է փոսի ձեւով։ Դրանք ունենում են մոտ կես մետր խորություն։ Այս աղբյուրները չունեն ակնհայտ հոսք, այնտեղից ջուր են վերցնում ամանն աղբյուրի մեջ սուզելով՝ շատ զգուշորեն, որ այն չպղտորվի[60]։ Ուշագրավ է, որ այս անվանումը հիշեցնում է «գուբ» բառը, որը նշանակում է եւ փոս, եւ ջրհոր[61]։

---

[57] *Տե՛ս* Յ. ԱլլաՀվէրտեան, *Ուլնիա կամ Զէյթուն, Կ. Պոլիս, 1884, էջ 33։*

[58] *Տե՛ս* Մ. Քէլէշեան, *Սիս-Մատեան։ Պատմական, բանասիրական, տեղեկագրական, ազգագրական, եւ յարակից պարագաներ, Պէյրութ, 1949, էջ 421,* Մ. Պարսամեան, Ա. Քէջեան, *Ակն եւ ակնցիք, Փարիզ, 1952, էջ 57։*

[59] *Տե՛ս* Ա. ԱՀարոնեան, Ն. Պատկանեան, *Զէյթունի պատմագիրք, Պուէնոս Այրէս, 1960, էջ 304։*

[60] *Տե՛ս* Յ. Զուլաքեան, *Քեսապ, հտ. Ա., Հալէպ, 1995, էջ 162–163։*

[61] *Տե՛ս* Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան, հտ. Ա., Երեւան, 1944, էջ 466,* Գ. Ճէրէճեան եւ Ա.Յ.Լ., *Հայոց լեզուի նոր բառարան, հտ. Ա., 1992, էջ 417։*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զեյթունը պատկանում է հայկական բնակավայրերի այն շարքին, որոնցում դարավանդման միջոցով տարածության յուրացումն ու օգտագործումը դրսեւորվում է կենսագործունեության բազմաթիվ բնագավառներում։ Զեյթունում երկրակեղեւի առանձնահատկություններով պայմանավորված, ինչպես բնակելի տարածքը, այնպես եւ երկրագործական միջավայրը գտնվել են դարավանդների վրա։

Արդյունավետորեն օգտագործելով միջավայրի ընձեռած հնարավորություններն պայմաններն ու բնական պայմանները՝ զեյթունցիներն իրենց համառության եւ աշխատասիրության շնորհիվ կարողացել են մի քանի դար շարունակ պահպանել իրենց ինքնիշխան վիճակը։ Դրա կարեւոր պատճառներից մեկն էլ այն էր, որ տնտեսական առումով միակողմանի կախվածություն չեն ունեցել հարակից շրջաններից։ Առկա է եղել եւ ներմուծում, եւ արտահանում։ Տնտեսական համակարգի ինքնուրույնության տեսանկյունից, առանցքային գործոն է եղել այն, որ զեյթունցին կարողացել է գրագիտորեն օգտագործել իրեն բաժին հասած սակավ հողատարածքները՝ ոռոգովի հողամասերում ստեղծել այգիներ, իսկ անջրդի տարածքներում վարելահողեր։

Անվտանգության առումով առաջնային նշանակություն է ունեցել ճանապարհների ու հաղորդակցման ուղիների նկատմամբ վերահսկողություն սահմանելը, որի շնորհիվ ռազմական բախումների ժամանակ նվազագույնի է հասցվել մարդաքանակի գործոնը։ Միեւնույն ժամանակ, հաղորդակցման ուղիներն առանցքային կարեւորություն են ունեցել տնտեսական գործունեության՝ մասնավորապես ապրանքաշրջանառության իրականացման համար։

Զեյթունում դարավանդային մշակույթի զարգացումը ամբողջապես կապված է եղել հարկադրական գործոնի հետ։ Քաղաքական աննպաստ պայմաններն են ստիպել հայ ժողովրդի մի հատվածին զբաղեցնել հեռավոր, անմատչելի ու ձորերով աչքի ընկնող վայրեր, եւ այնտեղ ստեղծել կենսագործունեության համար անհրաժեշտ բոլոր պայմանները։

ԱՄՓՈՓՈՒՄ

Կիլիկյան Հայաստանի հյուսիս-արեւելյան մասում գտնվող Զեյթունը հայկական բնակավայրի եզակի օրինակ է, որը դարեր շարունակ պահ-

պանել է ինքնավարության որոշակի մակարդակ։ Դրան նպաստել է շրջանի աշխարհագրական դիրքը, որը բնութագրվում էր զառիվայր կիրճերով, լանջերով եւ դժվարամատչելիությամբ։

Սույն աշխատանքը ներկայացնում է պատմական, տեղագրական, ազգագրական եւ երկրատեղեկատվական աղբյուրների, համալիր վերլուծություն՝ Զեյթունի մշակութային միջավայրը վերականգնելու նպատակով։ Հատուկ ուշադրություն է դարձվում դարավանդային համակարգին, ինչպես բնակավայրի կառուցման, այնպես եւ գյուղատնտեսական գործունեության մեջ։

Զեյթունը զարգացել էր որպես ռազմավարական ամրացված կետ՝ նեղ կիրճերի վերահսկողության, կամուրջների առկայության եւ դժվարամատչելի տարածքներ արագ նահանջելու հնարավորության շնորհիվ։ Քաղաքն ուներ դարավանդային՝ սանդղաձեւ կառուցապատում։ Տները կառուցված էին լանջերին, իսկ տանիքներն օգտագործվում էին որպես փողոցներ եւ բակեր։ Երկրագործությունն ուներ երկու հիմնական ճյուղ՝ դաշտավարություն եւ այգեգործություն։ Դարավանդման միջոցով օգտագործվում էին լանջային տարածքները։

Զեյթունը ոչ միայն տնտեսական, այլեւ մշակութային գործունեության ինքնուրույն շրջան էր։ Հարեւան բնակավայրերից կղզիացած լինելը, ինքնաբավությունը եւ կենսապայմանների առանձնահատկությունները զեյթունցիների մոտ ձեւավորել էին ինքնապաշտպանության եւ ռազմավարական մտածողության հմտություններ։ Եզակի ճարտարապետությունը, տնտեսավարման ձեւերը եւ հանրային կազմակերպությունը Զեյթունը դարձնում էին հայկական մշակույթի՝ լեռնային միջավայրին հարմարվելու վառ օրինակ։

Այսպիսով, ներկայացված ուսումնասիրությունը շեշտում է Զեյթունի կարեւորությունը՝ որպես հայկական լեռնային բնակավայր, որտեղ տարածքը մշակվել է առավելագույն արդյունավետությամբ՝ մարդու աշխատանքի միջոցով, բնական միջավայրի վրա ունեցած ազդեցության շնորհիվ։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Կիլիկյան Հայաստան, Զեյթուն, Զէյթուն, դարավանդ, բնական միջավայր։

РЕЗЮМЕ

Зейтун, расположенный в северо-восточной части Киликийской Армении, представляет собой уникальный пример армянского поселения, сохранившего определённый уровень автономии на протяжении нескольких столетий. Географическое положение региона, характеризующееся крутыми ущельями, склонами и ограниченной доступностью, способствовало формированию особой формы самоуправления и устойчивых форм землепользования.

В представленной работе проводится комплексный анализ исторических, топографических, этнографических и геоинформационных источников, с целью реконструкции культурного ландшафта Зейтуна. Особое внимание уделяется системе террасирования, как в строительстве поселения, так и в сельскохозяйственной деятельности.

Зейтун развивалось как стратегически укреплённый пункт, благодаря контролю над узкими ущельями, наличию мостов и возможностью оперативного отступления в труднодоступные районы. Город имел ступенчатую, амфитеатральную архитектуру: дома строились по склонам, крыши использовались как улицы и дворы. В сельском хозяйстве различали хлебопашество и садоводство. Земледелие велось на террасированных склонах.

Зейтун являлся центром не только экономической, но и культурной активности. Территориальная удалённость, самодостаточность и особые условия жизни сформировали у зейтунцев навыки самозащиты и стратегического мышления. Уникальная архитектура, формы хозяйствования и социальная организация делают Зейтун ярким примером адаптации армянской культуры к горной среде.

Таким образом, представленное исследование подчеркивает значение Зейтуна как образца устойчивой горной поселения, где пространство освоено с максимальной эффективностью благодаря труду и взаимодействию с природной средой.

SUMMARY

Zeytun, located in the northeastern part of Cilician Armenia, is a unique example of an Armenian settlement that maintained a certain level of autonomy



Նկ. 1. Զեյթունի աշխարհագրական միջավայրը (քարտեզը՝ Ռ. Գաբրիելյանի)



Նկ. 2. Զեյթուն քաղաքն ու իր երկրագործական լանդշաֆտը (քարտեզը՝ Ռ. Գաբրիելյանի)

for several centuries. The geographical location of the region, characterized by steep gorges, slopes and limited accessibility, contributed to the formation of a special form of self-government and sustainable forms of land use.

The presented work provides a comprehensive analysis of historical, topographic, ethnographic and geoinformation sources, in order to reconstruct the cultural landscape of Zeytun. Particular attention is paid to the terracing system, both in the construction of the settlement and in agricultural activities.

Zeytun developed as a strategically fortified point, thanks to control over narrow gorges, the presence of bridges and the ability to quickly retreat to hard-to-reach areas. The city had a stepped, amphitheater architecture: houses were built on slopes, and the roofs were used as streets and courtyards. In agriculture, a distinction was made between arable farming and gardening. Agriculture was carried out on terraced slopes.

Zeytun was the center of not only economic but also cultural activity. The remoteness, self-sufficiency and special living conditions have formed the skills of self-defense and strategic thinking among the Zeytun people. The unique architecture, economic forms and social organization make Zeytun a vivid example of the adaptation of the Armenian culture to the mountain environment.

Thus, the presented study emphasizes the importance of Zeytun as an example of a sustainable mountain settlement, where space is developed with maximum efficiency thanks to traditions, labor and interaction with the natural environment.